Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<Արմավիրի հ.8 Հիմնական դպրոց >>ՊՈԱԿ –ում ֆիզկուլտուրա

/12 դասաժամ /առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում/Ձև 1/մեկ լուսանկար 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
- Ինքնակենսագրություն/Ձև 5/
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերը/առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 29-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}- 15^{00} բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 1-ին ժամը 14^{00}-ին <<Արմավիրի հ. 8Հիմնական դպրոց >>ՊՈԱԿ –ում քաղաք Արմավիր Աբովյան 182: